

לחטט חזק - חזק חזק



לחטט חזק



מחזור 1934, 3000-4000

825
Ա-42

Ե, ՍԵՏՈՆ-ՏՈՍ ՊՍՈՆ

ԱՐԾԱԹ-ՊԵՇԻԿԸ

(Կրճատումներով)

Թարգմ. ԽՆԿՈ-ԱՊԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1934

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տնխ. խմբագիր՝ Սերոբ Գասպարյան
Սրբագրեց՝ Վ. Տիրոյան

ԱՐԺԱԹ-ՊԵՅԻՎԸ

I

Արժաթ-Պեյիվը մի իմաստուն ծեր ազնավ
էր։ Այդ անունը նա ստացել էր իր աջ աչքի ու
կողքի միջև ընկած արժաթի պես սպիտակ ու
մի փոքրիկ գրամի չափ պուտից։

Այդ սպիտակ պուտի շնորհիվ յես կարո-
ղանում էյի նրան տարբերել ուրիշ ազնավնե-
րից և իրար կապել նրա պատմության այն
ջոկ-ջուկ հատվածները, վոր հասել էյին ինձ։

Դուք պետք է գիտենաք, վոր ազնավները
չառ խելացի թռչուններ են։ Չե՞ վոր զուր չի
ստված այն առածը, թե «պառավ ազնավի
պես իմաստուն է»։ Ազնավները գիտեն, թե
ի՞նչ մեծ նշանակություն ունի կազմակերպու-
թյունը և նրանք ել զինվորներից պակաս վարժ-
ված չեն։ Իսկապես ազնավները միշտ զգուշ
են, միշտ յենթարկվում են կարգ կա-
նոնի և միշտ միմյանց վրա հույս են դնում
վտանգի ժամին։ Նրանց առաջնորդները յինում
են վոչ միայն յերամի ծերերն ու խելացիները,
այլև ամենաուժեղներն ու քաջերը, վորովհետև
նրանք պետք է միշտ պատրաստ լինեն խելքի



Դրամիտ № 8433. Դատվ № 264. Կրատ. № 2862. Խիրաթ 3000

Պետրասի ապարան Յերևան

բերելու մի վորեւ եւ լսաստած խռովարարի: Յերամուս բոլոր մնացածները ջահելներ աւ շարքային ազնավներ են, վոր հատուկ ընդունակություններ չունեն:

Արծաթ-Պեծիկը, վորի մասին այստեղ խոսվում եւ, մի մեծ յերամի առաջնորդն էր: Ազնավայերամն իր համար բնակութեան տեղ էր ընտրել Կեստլ Փրանկ բլուրը, վոր ծածկված էր յեղեկներով և գտնվում էր Հյուսիսային Ամերիկայի Տորոնտո քաղաքի մոտ: Արծաթ-Պեծիկի յերամում կար մոտ յերկուհարյուր ազնավ: Այդ յերամը յերբեք չէր ավելանում, թե ինչու, յես այդ չհասկացա: Յերբ ձմեռը մեղմ էր լինում, ազնավները մնում էյին Նիադարայի ափերի մոտ, իսկ ավելի խիստ ձմեռները նրանք թռչում էյին հեռու, դեպի հարավ: Բայց ամեն տարի, փետրվարի վերջին շարաթը, ծեր Արծաթ-Պեծիկը հավաքում էր իրեն հետևողներին ու համարձակ կրտսերում-անցնում քառասուն մղոն ջրատարածություն, վոր բաժանում էր Տորոնտոն Նիադարայից: Մակայն նա միշտ էլ ուղիղ գծով չէր թռչում, պտույտ էր տալիս դեպի արևմուտք, աչքից չէր կորցնում Դենդասը, վոր նրա համար ուղեցույցի տեղ էր ծառայում, մինչև վոր չէր յերեվում Կեստլ Փրանկ բլուրը: Այս ամեն տարի իր յերամով թռչում էր այդ բլուրը և այնտեղ ապրում վեց շաբաթ: Ազնավներն ամեն խոսովոտ բաժանվում էյին յե-

րեք ջոկատի ու գնում զբաղմունքի: Մի ջոկատը թռչում էր դեպի հարավ, Ատրրիջ ծովածոցի կողմը, մյուսը դեպի հյուսիս, իսկ յերրորդը՝ ամենամեծ ջոկատը, դեպի հյուսիս-արևմուտք: Այդ յերրորդ ջոկատի գլխավորն էր Արծաթ-Պեծիկը: Ով էր առաջնորդում մյուս ջոկատներին, յես այդ չգիտեմ:

Յեթե առավոտը հանդարտ էր լինում, ազնավները միանգամից վեր էյին բարձրանում ու թռչում, իսկ թե յեղանակը քամոտ էր լինում, նրանք ցածից էյին թռչում, իրենք իրենց հանձնելով հովտի պաշտպանութեանը: Իմ լուսամուտները նայում էյին դեպի այդ հովիտը: 1885թ. յես առաջին անգամ նկատեցի ծեր առաջնորդին:

Իմ այդ տեղ գալը վաղուց չէր: Մի հին բնակիչ, ցույց տալով ինձ ազնավայերամը, ասաց:

— Ա՛յ, այն ծեր ազնավը քսան տարուց յարդեն ավելի կլինի, վոր ամեն տարի հովտի վրայով թռչում ե մեզ մոտ:

Արծաթ-Պեծիկը ամենեին չէր կորցնում հին ճանապարհը, թեև հովիտն արդեն բռնված էր տներով:

Մարտ ամսին ու ապրիլի առաջին կեսին, ամեն ուր, հետո էլ ամառվա վերջին ու աշնան սկզբին նա թռչում էր իմ մոտով որակաւ մի յերկու անգամ: Յես հետեւում էյի նրա բոլոր չարժումներին ու լսում, թե ինչպես նա հրա-

մաններ եր արձակում իր յերամի մյուս ազ-
նալներին: Քիչ-քիչ յես հասկացա, վոր ազ-
նալները շատ խեղացի յեն, վոր նրանք ել իրենց
լեզուն ու իրենց հասարակական կազմն ունեն:

Մի անգամ յես կանգնած եյի բարձր կա-
մուրջի վրա, վոր ձգված եր հովտի մեջ: Որը
քամոտ եր: Յես տեսա, վոր շրջիկ յերամին ա-
ռաջնորդող ծեր ազնավը թռչում ե տուն: Կես
մղոնից յես արդեն կարողացա լսել մի գոհ
ձայն, վոր նշանակում եր. «ամեն ինչ յավ ե:
Թո՛ւք հեռուն»: «Ղա-ղա», — կանչում եր նա, ու
նրա ոգնականն ել կրկնում եր նույնը յերամի
թիկունքից: Նրանք թռչում եյին ցածրից, վո-
րովհետեւ վերեւում սաստիկ քամի յեր: Ինչ
այն կամուրջը, վորի վրա կանգնած եյի,
ստիպեց նրանց Վովելի վեր բարձրանալու:
Արձաթ-Պեծիկը տեսավ ինձ և նրան դուր չե-
կալ, վոր յես այնքան ուշադիր դիտում եմ
իրեն: Նա պահեց իր թուիչքն ու «ղա» կոչեց,
վեր նշանակում եր պատրաստ յեղեք և իս-
կույն ավելի վեր բարձրացավ:

Նկատելով, վոր յես գինված չեմ, նա թռավ
իմ գլխի վրայով: Մնացած ազնավներն ել
նույն բանն արին: Թռչելով կամուրջը յերամի
ցած իջավ նույն բարձրության վրա:

Հետեւյալ որը յես գնացի նույն տեղն ու
կանգնեցի կամուրջի վրա: Յերբ ազնավները
մոտեցան, յես բարձրացրի ձեռնափայտս ու
այնպես ցույց տվի, վոր իբր թե նրանց նշան

յեմ բռնում: Հին առաջնորդն իսկույն իր կրո-
նոցով զգուշացրեց նրանց, թե փտանդ կա: Նա
կարծես կանչեց. «Զգուշացե՛ք-հրացան»:

Նրա ոգնականը կրկնեց նույն ձայնը: Ա-
մեն մի Վազում իր հերթին բաժանվեց յերամի
ու վեր թռավ, մինչև վոր բոլորն ել դուրս յե-
կան փտանդի սահմանից: Անցնելով փտանդա-
վոր տեղը, նրանք նորից իջան հովիտը, վոր-
տեղ պաշտպանության համար ապահով եյին
զգում իրենց:

Մի ուրիշ անգամ, յերբ յերամը թռչում
եր հովտի վրայով, ծառի վրա իջավ մի կարմ
բատտիկ բաղե: Ծեր ազնավն իսկույն կոա-
վեց. «բաղեն, բաղեն», ու իր թուիչքը կանգնե-
ցրեց: Ամեն մի ազնավ նույն բանն արավ,
մոտենալով նրան: Ամբողջ յերամը կիսվեց
մի կույտ դարձավ: Խիտ կույտի համար բողբոս
սարսափելի չի: Հետո նրանք տեսան մի վարդ
հրացանն ուսին, և իսկույն լավեց մի հաստիկ
ձայն, վոր զգուշացնում եր լուրջ փտանդից ու
հրացանից: Առաջնորդը կարծես հրաման եր
տալիս նրանց. «Զգո՛ւյ՜... հրացան... թո՛ւք
զանազան կողմեր...»: Չայնր թեկրեկուն եր և
մի բանի անգամ «ղա, զա, զա,» կրկնեց:

Ազնավները շատ ապահատակվեցին, ցիր ու
ցրտն թռչելով դեպի վեր և այդ կերպ անհատա-
նելի դարձան հրացանի զնդակների համար:

Այդ յերամի հետ մի յերկարատև ծանո-
թության ընթացքում յես ուսումնասիրեցի



Ճեր առաջնորդի շատ ազդանշանները և սովորեցի նրանց իրարից տարբերելը:

Յեռ համարվեցի, վոր շատ ձայներ, վորոնք իրանց հնչյուններով, քիչ են տարբերվում իրարից, հաճախ նշանակում են զանազան բաներ:

Այսպես, որինակ, մի դեպքում աղաղակը նշանակում է բազեյի կամ առհասարակ մի վոր-և է վտանգավոր գիշատիչ թռչնի հայտնվելը, իսկ այլ դեպքում նշանակում է «յեռ դարձիր»:

Ակներեմ է, վոր այդտեղ յերկու ազդանշանի խառնուրդ է կատարվում. մի ազդանշան ինը նշանակում է վտանգ կա, մյուսինը նրշանակում է նահանջել:

Հասարակ աղաղակը «զա, զա,» նշանակում է «բարե»-վողջուն, վոր վերաբերվում է մոտիկ թռչող ընկերին:

Կա և մի բացականչություն, վոր, առհասարակ, ուղղվում է ամբողջ յերամին ու նշանակում է—«ուշադրություն»:

Ապրիլի սկզբներում ագռավների մեջ ըսկավեց մի մեծ խառնաշփոթություն: Ագռավներն օրվա կեսն անցկացնում էյին յեղենինների մեջ, փոխանակ առավոտվանից մինչև յերեկո թռչելու և իրենց համար ուտելիք փնտրելու, նրանք յերկու-յերկու յերեք-յերեք իրար յետեվից էյին ընկնում, և յերբեմն թռիչքի մրցում էյին սարքում:

Նրանց օիրելի զբաղմունքն էր մեծ բարձրությունից ցած նետվել վորեւե ճյուղքի նստած

ազոավի ուղղութեամբ և թռչելով նրա մոտ, վերջին վայրէջանին, մի մազաչափ հեռու նրանից, հանկարծ յետ դառնալ ու ձախրել ուղում, դեպի վերև այնպիսի արագութեամբ, վոր թեւերի հանած աղմուկը հիշեցնի հեռավոր վորոտի ձայնը:

Մի ուրիշ անգամ յես տեսա, վոր ազոավներից մեկը, փետուրները զգզոված, գլուխը խոնարհում է, մոտենում մի ուրիշ ազոավի, ու ձայնին ծոր տալով՝ ղուեղունում:

«Դրո, ո... ո... ո...»

Այս բոլորն ի՞նչ եր նշանակում: Յես չուտով հասկացա, թե բանն ինչումն է:

Այդ արու ազոավներն էյին, մարիներին սիրաչահելու համար ցույց էյին տալիս իրենց թևերի ու իրենց ձայնի ուժը: «Ապրիլին նրանք ցույգ-ցույգ թռան՝ վորևե տեղ ձվեր ածելու և ձագեր հանելու: Կեսուլ Փրանկի յեղեմիները դատարկվեցին ու լուռ մնացին:

II

Շաքարի գլուխ բլուրը կանգնած է մենակն հովտում: Նա պատած է անտառներով, վորոնք միանում են Կեսուլ Փրանկի անտառներին: Այդ յերկու բլուրների մեջ, անտառում կանգնած է մի յեղեմի, վորի կատարին գանձում է բաղնի մի յետ քնիւած բուն. այգայես, այգբունը մնացել եր այնտեղ չատ տարիներ՝ հին, զգզոված ու կիսաքանդ: Բայց դարձյալ նա վերջնականապես չեր քանդվել:

Մի անգամ առավոտյան, մայիսի մեջ, յես դուրս յեկա տնից լուսաբացին և կամացուկ գնացի անտառով: Գետին թափված տերևներն այնպես էյին թրջվել, վոր վոչ մի չըշյուն չեր լսվում: Յես անց կացա հենց այն հին բնի տակից ու դարմացա, յերբ նկատեցի այդ բնից դուրս ցցված մի սև թռչնի պոչ:

Յես ամբողջ ուժով խփեցի ծառին և իսկույն դուրս յեկավ բնից մի ազոավ: Գաղտնիքը բացված եր: Այդ ազոավը Արծաթ Պեծիկըն եր՝ իր ընկերուհու հետ: Նրանք տիրել էյին այդ բունը. բայց նրանք այնքան խելացի էյին, վոր ամեն դարնան բունը չէյին վերանորոգում, վոր աչքի չընկնեն և վտանգից ազատ մնան:

Նրանք այնտեղ յերկար ապրում էյին, լիովին անվտանգ, թեև ամեն ոք այդ բնի տակից անցնում էյին հրացանավոր մարդիկ ու յերեխաներ՝ ազոավ խփելու: Բայց և ինձ ել չհաջողվեց զոնե մի անգամ ևս տեսնել ծեր ազոավին, թեև յես հաճախ նայում էյի բնին հեռավորակով:

Մի անգամ, յերբ յես դիտում էյի, տեսա մի ազոավ հեռվից թռչելիս՝ կտցում մի ինչ վոր սպիտակ բան բռնած: Ազոավը կտցից վայր զցեց այն սպիտակ իրը: Լավ նայելով յես ճանաչեցի իմ հին բարեկամ՝ Արծաթ-Պեծիկին:

Մի բուպեյից հետո նա նորից բարձրացրեց գետին գցած այն իրը՝ խեցին և ուղեվորովեց հեռուն: Նա անցավ առուն, այնտեղ ջրային խոտե-



ըի ու այլ բույսերի մեջ, գետնից դուրս տվեց մի կույտ խեցիներ ու սպիտակ փայլուն քարեր: Արծաթ-Պեծիկն այդ խեցիները շարում էր արևի դեմ շուռ-մուռ տալով, կտցով բարձրացնելով մեկը մեկի յետևից և հետո ելի գցում էր գետին, նստում էր նրանց վրա, կարծես թե իր ձվերը լինեյին, զվարճանում էր նրանցով:

Նա ժլատի պես կլանում էր նրանց միայն աչքերով, ինչպես ասում են. «աչքե տես, բերնե կարոտ»: Այդ նրա թուլությունն էր: Նա չէր կարող իհարկե, բացատրել, թե ինչու համար նրանք իրեն դուր են գալիս, ինչպես փոր աչակերտը չի կարող բացատրել, թե ինչիցն է փոր իրեն դուր ե գալիս նամակադրոշմ հավաքելը:

Բայց այն բավականությունը, փոր ծեր աղ ուսվն ստանում էր այդ իրերից, շատ անկեղծ էր: Կես ժամի չափ խաղալուց հետո նա իր գանձը ծածկեց հոգով ու տերևներով, ասլա, թոսով:

Յես իսկույն ուղեվորվեցի այն կողմը և դիտեցի նրա պահեստը: Այնտեղ կային սպիտակ քարերի, խեցիների մի կույտ ու թիթեղի կտորտանք: Նրանց մեջ գտնվեց նաև մի ճեղքապակե թեյնոցի ունի: Հավանական էր, փոր դուրս հավաքած կոլեկցիայի լավագույնն էր և թանգարժեքը: Բայց դրանից հետո ել չուեստ այդ գանձը: Արծաթ-Պեծիկը հոտն առավ, փոր յես գտել էմ նրա հարստությունը և շուտով այն իրերը փոխադրեց ուրիշ տեղ: Բայց թե ո՞ր,

վորտեղ, այնպես էլ յես յերբեք չիմացաւ:
Արծաթ-Պեծիկը շատ արկածներ ապրեց և շատ
անգամ ազատվեց փորձանքից ու իր յետե-
վից ընկած գիշատիչ թռչունների ճանկերից:
Նրան նեղութուն էյին տալիս հատկապես ցախ
տարյակները: Բայց նա միշտ էլ փախչում էր
նրանցից:

Արծաթ-Պեծիկն ուներ մի քանի դաժան
սովորութիւն: Նա, որինակ, ամեն սուսուս
զնում էր խուզարկելու փոքրիկ թռչունների
բներն ու ուտում էր նրանց նոր ածած ձկերը:

Նրա բմբռնողութիւնն ինձ հաճախ գարմաց-
նում էր: Միանգամ յես տեսա, վոր ձորի մի-
ջով թռչելիս նա կտցով բռնել է մի պատառ
հաց: Այդ ժամանակ, ներքեում, բանվոր-
ները ջուր տանելու համար աղյուսե խողո-
վակ էյին շինում: Առփակի մի մասը՝ մոտ յեր-
կու հարյուր յարդի չափ, արդեն բոլորովին
ծածկված էր: Արծաթ-Պեծիկը թռչելով ամփի
բաց մասի վրայով, հանկարծ հացը ցած գցեց
կտցից: Զրի հոսանքը քչեց հացը, տարաւ
գցեց տոնելի մեջ: Արծաթ-Պեծիկն իսկույն ցած
թռավ: Նախ մանրակրկիտ նայեց ջրայրի մեջ,
իսկ հետո կարծես թէ նրա գլխում ծագեց մի
բախտավոր միտք: Նա ջրի հոսանքով ներքե
թռավ գեպի տոնելի ցածի բերանը, վորտեղ և
սպասեց հացի դուրս գալուն: Հացը դուրս գա-
լուն պես կտուցն առավ և հանդիսավոր կեր-
պով տարավ:

Նա ապրում էր այնպիսի մի շրջանում,
վոր թեև վտանգներով լիքն էր, բայց ուտելի-
քի կողմից շատ առատ էր: Այն հին բնում նա
իր ընկերուհու հետ, վորին յերբեք յես չտեսա
անվտանգ ծագեր էյին հանում: Իսկ յերբ ազ-
նավները յերամով հավաքվում էյին, Արծաթ-
Պեծիկը դառնում էր նրանց առաջնորդը:

Ազնավ-յերամահավաքը սովորաբար լի-
նում է հունիսի վերջին: Ծնողները ջահել ազ-
նավներին, վորոնց պոչերը կարճ են, թեկերը
փափրիկ, ձայները ծղրտան, տանում են հնամ-
յա յեղնուռ անտառը, վորտեղ հավաքվում է
ամբողջ ազնավ-յերամը: Այդ հնամյա անտա-
ռում վորն ունի բարձր ճյուղեր և լավ պաշտ-
պանված տեղեր, սկսվում է ջահելների վար-
ժութիւնը: Առաջին որերին ջահել ազնավները
ծանոթանում են իրար հետ: Հիմա ծնողները
կարող են քիչ հանգստանալ այն բոլոր աշխա-
տանքներից հետո, վոր թափում էյին իրենց ճու-
տերին կերակրելու և կրթելու համար: Հիմա
այդ ճաղերը մեծացել են և կարող են իրենք
իրենց համար կեր ճարել:

Յերկու շաբաթ հետո սկսվում է փետրա-
փոխութիւն շրջանը: Այդ միջոցին հին ազ-
նավները ջրայնացած ու բարկացկոտ են լի-
նում: Նրանք շարունակում են սովորեցնել ու
վարժեցնել ջահելներին, վորոնց, իհարկե,
այնքան էլ դուր չի գալիս այն բմբռնիկ ու
սուցիչների խրատներն ու պատիժները...



Սակայն այդ արվում է նրանց ոգտի համար, ինչպես ասում են մի հարգելի պատուհիկին՝ քերթելով կենդանի ոճածկների վրայից նրանց մորթին: Բայց ծերուկ Արծաթ-Պեծիկը հրաշալի ուրուցիչ էր: Չահել ազնավները սովորում են վոչ թե բոլորը միատեղ ալլ ջուկատներով:

Ավելի չափահաս ազնավիկները լինում են մի ջուկատում, իսկ ավելի դեռահաս ազնավիկները մյուս ջուկատում:

Սեպտեմբերի դեմ հիմարիկ ազնավիկների ազմկոտ ամբոխն ըստ յերեվոյթին «խելք ու շնորհք» սովորեց: Ճտերին հատուկ աչքերի բաց-կապուտակ գույնը փոխվեց մեծ ազնավների աչքերի գույնի, դարձավ կինամոնագույն: Նրանք այլևս ճտեր չեն. իմացան այն բոլորը, ինչ վոր պետք է իմանա մեծ ազնավը: Նրանք սովորեցին զգուշության բոլոր կանոնները: Նրանք իմացան, թե ինչ բան է հրացանը, ինչ բան է ծուղակը: Սովորեցին տարբերել թունավոր միջատները ուտելու միջատներից: Նրանք արդեն գիտեն, վոր հոգանոցը հրացան չի: Վառուդի հոտն ել արդեն նրանց ծանոթ էր: Նրանք իմացան թե ծառի հարավային կողմը վորն է: Թռչելուց ցած իջնելիս նրանք յերեք անգամ թևերը ծալում էյին. այդ նրա համար, վորպեսզի հավատացած լինեն, վոր իրենց թեվերը լավ են կազմակերպված: Նրանք գիտեն, թե ինչ անեն,





Վոր ազվեսն իր ճաշի կեսն իրենց տա և նույնպես գիտեցին, Վոր պետք է թփերի մեջ թաղնվել, յերբ ցախսարյակի նման մանր թռչունները հարձակվում եյին նրանց վրա, Վորովհետեւ այն մանր թռչնամիւսերի դեմ կռվելն անհնարին է:

Սեպտեմբերը մեծ փոփոխություններ բերեց մեծ ազնաւիների համար: Փետրաւոթյուն չրջանն անցկացաւ: Նրանց փետրավորումը վերջացաւ: Նրանք սկսեցին հպարտանալ իրենց նոր զգեստով: Նրանց առողջությունը կրկին վերականգնեց և դրա հետ միասին լավացաւ և տրամադրությունը: Մինչև անգամ այն խիստ ուսուցիչը, — Արծաթ-Պեծիկը կենսութեան դարձաւ և ջահելներն ել, վաղ գիտեցին նրան, հիմա իսկապես սիրեցին իրենց առաջնորդին:

Նա լավ կրթեց նրանց, ծանոթացրեց բոլոր ազգանշանների և հրամանների հետ: Հիմա շատ հաճելի յե առաւիտ վաղ նայել նրանց վրա:

— «Առաջին ջոկա՛տ» — ձայն է տալիս մեծ հրամանատարը իր ազնաւիային լեզվով և առաջին ջոկաւան ել պատասխանում է նրան բարձր աղմուկով:

— «Թռեք» — և բոլորը թռչում են առաջ՝ իրենց առաջնորդի գլխավորութեամբ:

— «Բարձրացեք», — և նույն բոլակային բոլորը թռչում են վեր:

«Հալաքվեցեք կույտ»—և բոլորը մի խիտ կույտ են կազմում:

«Ջուկ-ջուկ թուեք»—և բոլորն իսկույն ցրվում են զանազան կողմեր, ինչպես թափված տերևներ:

«Շարք կազմեցեք»—և բոլորն իսկույն շարվում են կազմերով մի յերկար գիծ:

«Իջեք»—և բոլորը թափվում են ցած, քիչ և մնում գետնին հասնեն:

«Կեր վորոնեցեք»—և բոլորը միասին իջնում են գետին, ցրվում են զանազան կողմեր, բայց նրանցից յերկու հերթապահ հսկում են մեկը ծառի վրա, աջ կողմից, մյուսը բլրի վրա ձախ կողմից: Յերկու բռպե անց լավում է Արծաթ-Պեծիկի ձայնը, վոր նշանակում է. «Հրացանով մարդ»: Հերթապահ պահապաններ կրրկնում են այդ կոռոցը և ամբողջ ջոկատն իսկույն թռչում է ցիր ու ցան՝ դեպի ծառերը: Իրենց ձգելով ծառերի յետևը, նրանք նորից գիծ են կազմում ու թռչում դեպ իրենց հարազատ յեղևներները:

Վոչ բոլոր ազնավներն են կատարում հերթական ժամապահի պաշտոնը: Ընտրվում են միայն նրանք, վորոնք արդեն շատ անգամ ապացուցել են իրենց արթուն և աչալուրջ լինելը:

Նրանք պետք է հսկեն և թե միյեմնույն ժամանակ կեր փնտռեն: Իհարկե, նրանց համար այդ բանը դժվար կլինի, բայց այս ել կա, վոր ազնավային կազմակերպությունը բոլոր

թռչունների կողմից ճանաչվում է ամենալավն ամբողջ աշխարհում:

III.

Ազնավը հիմար է լինում միայն գիշերը: Ամբողջ աշխարհում ազնավի համար միակ սարսափելի թռչունը—այդ բուն է: Յերբ մթնում լավում է բվականչը, սարսափը բռնում է ազնավներին: Բվի ամենասեռավոր գիշերականչն անգամ վախեցնում է ազնավներին: Նրանք իսկույն գլուխները հանում են թևերի տակից ու նստում՝ ականջ դնելով ու դողալով ամբողջ գիշերը: Շատ ցուրտ յեղանակներին նրանք մերսեցնում են իրենց աչքերը: Յեթե ազնավը չի թաղցնում գլուխը թևի տակ, նա կարող է զրրկվել իր աչքերից: Այդ նշանակում է մահ:

Սակայն, առավոտը բացվելուն պես, ազնավի վրա քաջություն է գալիս: Քաջալերված, նրանք գնում են խուզարկելու անտառները:

Գտնելով իրենց վախեցնող բվին՝ կամ ըսպանում են նրան կամ տանջելով մահվան դուռը հասցրած, քչում հեռացնում նրան քսան մղոնի չափ:

1883 թվին ազնավներն իրենց սովորություն պես յեկան Կեստլ-Փրանկ: Անտառով անց նեկիս մոտիկ ծառից բուն արծակեց իր սովորական կոկորդային խռպոտ ձայնը. «զրո-ռու» և թեվերը թափահարելով թռավ դեպի հեռուն:



Յերկու որից հետո, լուսադեմին ազոավնե-
րի մեջ մեծ իրարանցում ընկավ: Յես վաղ վեր
կացա իմանալու, թե ինչու՝ յեն թռչուններն
այդպէս վրդովված: Հանկարծ տեսա ձյան յե-
րեսին մի քանի սև փետուր, քամուց քշված:
Յես գնացի քամու դեմ, վոր իմանամ թե նա
փորակեղից ե բերել այդ փետուրները, և շուտով
տեսա ազոավի արյունոտ մնացորդները զրա
հետ միասին և մեծ ճանկերի կրկնակի հետքեր:
Յես հասկացա, վոր ազոավասպանն այն ցցա-
կանջ գիշերականչ գիշատիչ բուն եր: Շուրջը
նկատվում եյին տեղի ունեցած կովի հայտնի
նշաններ. բայց կատաղի թշնամին, պարզ ե,
վոր չափազանց ուժեղ ե յեղել անբախտ ազոա-
վից: Բուն քաշել ե նրան իր նստած ճյուղքի
վրայից՝ գիշերին, յերբ մութը զրկել ե նրան
տեսնելու և զիմադրելու հնարավորութիւնից:

Յես խառնեցի թռչնի արյունոտ մնացորդ-
ները և հանկարծ տեսա նրա գլուխն ու աղամա-
րացականչեցի: Ավա՛ղ, այդ իմ ծանոթ հին Ար-
ծաթ-Պեծիկի գլուխն եր: Վերջացավ նրա յեր-
կար կյանքը, վոր այնքան ոգտավետ եր իր ցեղի
համար: Նրան սպանեց բուն, վորից զգուշանա-
լու և փախչելու ձեւն եր սովորեցրել հարյու-
րավոր ջահել ազոավիկների:

Շաքար գլուխ բլրի վրայի հին բունն ամա-
յացավ: Ազոավներն առաջվա պէս գալիս են
գարնանը կեստը-Ֆրանկ, բայց նրանց հետ չի
լինում իրենց նշանավոր առաջնորդը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0390048

965



825

U.42